# ԶԱՐԹՕՆՔ

Օրաթերթ

ՌԱԿ Սփիւռք Յանձնաժողով

ZARTONK JOURNAL POLITIQUE ARMÉNIEN

زارتونك جريدة سياسية أرمنية

Հինգշաբթի / 8.2.2018 | 81րդ Տարի, թիւ 6(22,136) | Տարեկան Բաժանորդագին՝ 225,000 Լ.Ո. | Հատավաճառ՝ 1000 Լ.Ո. / 8 Էջ


**Շաբթուայ Լուրը**

## Միքայէլա Շիֆրինի Մեծագոյն Սէրը Իր Դահոյկները Չեն



Դահուկարշաւի ամերիկացի ախոյեան Միքայէլա Շիֆրինին երբ հարց տրուած է, թէ ինչ է այն բանը, որ ինք ամենաշատը կը սիրէ, ան առանց տատամսելու պատասխանած է.

-Յաւանաբար իմ անկողինս: Տարօրինա՞կ է:

2014-ի Ողիմպիական լեռնադահուկային մրցավազքի ախոյեանը շատ կը քնանայ: Ան անկողին կը մտնէ երեկոյեան ժամը 9-ին եւ կ'արթննայ մօտաւորապէս առաւօտեան ժամը 7-ին: Ուշագրաւ է, որ, 2013-ին կատարուած վիճակագրութեան մը համաձայն, ամերիկացիներու միմիայն 5 տոկոսը իւրաքանչիւր օր 9 ժամ քուն կ'առնէ:

Մ. Շիֆրին գիշերուան իր քնոտութիւնը կը համալրէ նաեւ օրամիջի մրափով:

«Մեծ նշանակութիւն ունի ինծի համար հանգստանալը»,- Շիֆրին նշած է Սաւաննահ Կուդրիին «Այսօր» նախագիծին ընթացքին՝ կատակելով, որ եթէ ոսկէ մետալ սահմանուած ըլլար մրափելու համար, «հաւանաբար ես կը յաղթեմ»:

Շիֆրին այնքան ժրաջան ու հետեւողական է օրամիջի մրափին մէջ, որ իր խումբի անդամները այս բառերով կ'ակնարկեն իրեն. «Շատ կը մրափող»:

«Late Night with Seth Meyers» նախագիծին Շիֆրին խոստովանած է, որ շատ յաճախ կը քնանայ լեռնադահուկային վերելակներու վրայ: Ան անգամ մը չէ կրցած արթննալ լեռնագագաթը եղած միջոցին եւ ան հարկադրուած եղած է սահիլ լեռն ի վար՝ լեռնադահուկային վերելակին վրայ նստելով:

Շիֆրին նոյնիսկ ննջած ժամանակ իմացած է 2017-ի աշխարհի բաժակի ընդհանուր կոչումին իր ձեռքբերումը: Երբ ան արթնցած է, նկատած է, որ հասած է այդ տիտղոսին, քանի որ Սլովենիայի իր ամենալաւ մրցակիցը, ետ քաշուած է մրցավազքէ մը:

«Յագիւ արթնցայ, մայրս նման արտայայտութիւն ունեցաւ. «Շնորհաւոր ըլլայ»: Շիֆրին պատասխանած է. «Յոյակապ, բայց ես իրաւամբ բան մը չըրի. Ես քնացած էի»:

# Ֆութպոլ

### Սպանիոյ Քոփա Տէլ Ռէյ

## Լէկանէս Հաւասարեցաւ Սեւիլիայի Հետ

Սպանիոյ Քոփա Տէլ Ռէյի կիսաւարտական հանգրուանի մրցումները սկսան: Այս հանգրուանի երթի առաջին մրցումին, «Ռէալ Մատրիտ»ը դուրս ձգած «Լէկանէս»ը իր դաշտին վրայ ընդունեց 6-րդ դիրքը գրաւող «Սեւիլիա»ն: Մրցումը աւարտեցաւ 1-1 հաւասար հաշիւով: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքը.

- Լէկանէս - Սեւիլիա 1-1

կոլեր.Սիովաս 56 - Մուրիէլ 21, փոխ.Սարապիա

Այս հանգրուանի երթի երկրորդ մրցումին, առաջատար «Պարսելոնա»ն իր դաշտին վրայ ընդունեց 3-րդ դիրքը գրաւող «Վալենսիա»ն: Մրցումին միակ կոլը նշանակեց Լուիս Սուարեզը 67-րդ վայրկեանին: Մրցումը աւարտեցաւ «Պարսելոնա»ի 1-0 հաշիւով յաղթանակով:

### Սպանիոյ Ախոյեանութիւն

## Ռէալ Մատրիտ Դարձեալ Կէտ Կորսնցուց



Շաբաթավերջին տեղի ունեցած Սպանիոյ ֆութպոլի ախոյեանութեան 22-րդ հանգրուանի ամենահետաքրքրական մրցումին, 16-րդ դիրքը գրաւող Վալենսիայի «Լեւանթէ»ն իր դաշտին վրայ ընդունեց 4-րդ դիրքը գրաւող «Ռէալ Մատրիտ»ը: Սերժիօ Ռամոսի եւ Իսքոյի վերադարձը «Ռէալ Մատրիտ»ի հիմնական կազմին վնասուածքի պատճառով բացակայէլէ ետք, իր դրական ազդեցութիւնը ունեցաւ խումբին վրայ: Թէեւ հիւրերը առաւելութիւն ունէին տիրապետութեան, անկիւնային հարուածներու կամ դիպուկ հարուածներու թիւով, սակայն «Լեւանթէ»ն կրցաւ հաւասարակշռել իր արդիւնաւէտութեամբ: Հիւրերը 11-րդ վայրկեանին նշանակեցին Սերժիօ Ռամոսի միջոցով, Քրաւսի փոխանցումով: 42-րդ վայրկեանին Պոաթենկ հաւասարեցուց հաշիւը: Իսքօ նշանակեց «Ռէալ»ի երկրորդ կոլը 81-րդ վայրկեանին, Պենզեմայի փոխանցումով: Իսկ 89-րդ վայրկեանին Փացցինի նշանակեց հաւասարութեան կոլը, Ճեյսընի փոխանցումով: Մրցումը աւարտեցաւ 2-2 հաւասար հաշիւով: Ստորեւ տեսնել ցարդ արձանագրուած արդիւնքները.

- Էյպար - Սեւիլիա 5-1, - Ռէալ Պեթիս - Վիյարէալ 2-1
- Տեփ.Ալավէս - Սելթա Տէ Վիկօ 2-1
- Խեթաֆէ - Լէկանէս 0-0
- Էսփանիոլ - Պարսելոնա 1-1

կոլեր.Ժ.Մորենօ 66, փոխ.Ս.Կարսիա - Փիքէ 82, փոխ.Մեսսի

- Աթլեթիքօ Մատրիտ - Վալենսիա 1-0, կոլ.Ա.Քորրէա 59, փոխ.Քոքէ
- Ժիրոնա - Աթլեթիք Պիլպաօ 2-0

Դասաւորում.

| | |
|---|---|
| 1-Պարսելոնա | 22 մ. 18 յ 4 հ 0 պ 58 կէտ 60-11 |
| 2-Աթլեթիքօ Մ. | 22 մ. 14 յ 7 հ 1 պ 49 կէտ 33-9 |
| 3-Վալենսիա | 22 մ. 12 յ 4 հ 6 պ 40 կէտ 42-26 |

Ռմբարկուներ.1-Լ.Մեսսի-Պարսելոնա 20 կոլ, 2-Լ.Սուարէզ-Պարսելոնա 16 կոլ, 3-Ե.Ասփաս-Սելթա Տէ Վիկօ 15 կոլ:

### Գերմանիոյ Ախոյեանութիւն

## Պորուսիա Տորթմունտ Շարունակեց Յաղթարշաւը

Գերմանիոյ ֆութպոլի ախոյեանութեան 21-րդ հանգրուանի ամենահետաքրքրական մրցումն էր «Քէօլն» - «Պորուսիա Տորթմունտ» մրցումը: Վերջին դիրքը գրաւող «Քէօլն»ը իր դաշտին վրայ ընդունեց 6-րդ դիրքը գրաւող «Պորուսիա Տորթմունտ»ը: «Քէօլն» վերջերս լաւ արդիւնքներ

կ'արձանագրէ եւ կը փորձէ դուրս ելլել վտանգաւոր գօտիէն, իսկ «Պորուսիա Տորթմունտ» Փոլ Աուպամեյանկի փոխարէն ստացաւ «Չելսի»ի պելճիքացի յարձակող Միշի Պաթշուայիի ծառայութիւնները: Եւ այդ մարզիկն է որ ստեղծեց տարբերութիւնը նշանակելով երկու կոլեր: Թէեւ մրցումը հաւասարակշռուած ընթացք ունէր, սակայն «Պորուսիա»ն աւելի արդիւնաւէտ գործող կազմն էր: Յաղթանակէն ետք «Պորուսիա»ն բարձրացաւ 4-րդ դիրք: Ստորեւ տեսնել ցարդ արձանագրուած արդիւնքները եւ դասաւորումը.

- Քէօլն - Պորուսիա Տորթմունտ 2-3
կոլեր.Զոլըր 60, Խ.Մերէ 69 - Մ.Պաթշուայի 35, 62, Շուրլէ 84
- Մայնց05 - Պայըրն Միւնիխ 0-2, կոլեր.Ռիպերի 33, Խ.Ռոտրիկէզ 44
- Պոր.Մէօնշընկլատպախ - Ար Պի Լայփցիկ 0-1, կոլ.Ա.Լուքմէն 89
- Ֆրայպուրկ - Պայէր Լեվերքուզըն 0-0, Շալքէ04 - Վերտէր Պրեմըն 1-2
- Աուկսպուրկ - Այնթր.Ֆրանքֆորթ 3-0

Դասաւորում.

1-Պայըրն Միւնիխ 21 մ. 17 յ 2 հ 2 պ 53 կէտ 51-16
2-Պայէր Լեվեր. 21 մ. 9 յ 8 հ 4 պ 35 կէտ 41-27
3-Լայփցիկ 21 մ. 10 յ 5 հ 6 պ 35 կէտ 33-29

Ռմբարկուներ.1-Ռ.Լեւանտովսքի-Պայըրն Միւնիխ 18 կոլ, 2-Փ.Աուպամեյանկ-Պոր.Տորթմունտ 13 կոլ, 3-Ա.Ֆինպոկասոն-Աուկսպուրկ 11 կոլ:

### Գերմանիոյ Բաժակ

## Պայըրն Միւնիխ Եւ Լեվերքուզըն Յաղթական



Շաբթուան ընթացքին սկսած Գերմանիոյ ֆութպոլի բաժակի մրցաշարքի քառորդ աւարտական հանգրուանի մրցումներուն, առաջատար «Պայըրն Միւնիխ»ը իր դաշտէն դուրս յաղթեց երրորդ դասակարգի «Փատերպորն»ին: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

- Փատերպորն (Գ.Դաս.) - Պայըրն Միւնիխ 0-6
կոլեր.Քոման 19, Լեւանտովսքի 25, Քիմիչ 42, Թոլիսօ 55, Ռոպըն 86, 88
- Պայէր Լեվերքուզըն - Վերտէր Պրեմըն 4-2 յետ երկարաձգումի, մրցումին հիմնական ժամանակը աւարտած էր 2-2 հաշիւով

### Անգլիոյ Ախոյեանութեան 25-րդ Հանգրուան

## Լիվըրփուլ Յաղթական




Շաբթուան ընթացքին սկսան Անգլիոյ ֆութպոլի ախոյեանութեան 25-րդ հանգրուանի մրցումները: Այս հանգրուանին 6-րդ դիրքը գրաւող «Արսենալ»ը իր դաշտէն դուրս մրցեցաւ 20-րդ դիրքը գրաւող «Սուանսի Սիթի»ին դէմ եւ կրեց իր րդ պարտութիւնը: Հենրիխ Մխիթարեան կատարեց իր առաջին մրցումը իր նոր խումբին մէջ, երբ դաշտ մտաւ 60-րդ վայրկեանին փոխարինելու համար եգիպտացի Մոհամմատ Էլ Նանին: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

- Սուանսի Սիթի - Արսենալ 3-1
կոլեր.Քլուքաս 34, 86, Այու 61 - Նաչօ Մոնրէալ 33, փոխ.Էօզիլ
- Հատըրզֆիլտ Թաուն - Լիվըրփուլ 0-3
կոլեր.Քան 26, Ֆիրմինօ 45+1, Մոհամմատ Սալահ տուգ.78
- Ուեսթ Հէմ Եունայթըտ - Քրիսթըլ Փալաս 1-1

5-րդ դիրքը գրաւող «Թոթընհէմ Հոցփըր»ը իր դաշտին վրայ ընդունեց 2-րդ դիրքը գրաւող «Մանչեսթըր Եունայթըտ»ը եւ յաղթեց 2-0 հաշիւով: Այս «Եունայթըտ»ի 4-րդ պարտութիւնն էր: Տիրապետութեամբ, անկիւնային հարուածներու թիւով եւ դիպուկ հարուածներով դաշտի տէրերը փոքր առաւելութիւն մը ունէին, զոր վերածեցին առաւելութեան եւ յաղթեցին: «Չելսի»ի պարտութենէն օգտուեցաւ «Լիվըրփուլ»ը, որ կէտերով հաւասարեցաւ «Չելսի»ին եւ կոլերու տարբերութեամբ գրաւեց 3-րդ դիրքը: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

- Չելսի - Էյ Էֆ Սի Պորնմըթ 0-3
- Էվըրթըն - Լեյսթըր Սիթի 2-1
- Մանչեսթըր Սիթի - Ուեսթ Պրոմիչ Ալպիըն 3-0
կոլեր.Ֆերնանտինիօ 19, Տէ Պրոյն 68, Ակուէրօ 89
- Թոթընհէմ Հոցփըր - Մանչեսթըր Եունայթըտ 2-0
կոլեր.Էրիքսըն 1, Ճոնզ սխալ.28

### Անգլիոյ Ախոյեանութեան 26-րդ Հանգրուան

## Մխիթարեան 3 Փոխանցումի Հեղինակ



Շաբաթավերջին սկսան Անգլիոյ ֆութպոլի ախոյեանութեան 26-րդ հանգրուանի մրցումները: Այս մրցումներուն, 6-րդ դիրքը գրաւող «Արսենալ»ը իր դաշտին վրայ մրցեցաւ 9-րդ դիրքը գրաւող «Էվըրթըն»ի դէմ: «Ասենալ»էն աչքի ինկան Արոն Ռեմսին, Մխիթարեանը եւ «Պորուսիա Տորթմունտ»էն նոր փոխանցուած Աուպամեյանկը: 6-րդ վայրկեանին «Արսենալ» նշանակեց առաջին կոլը Ռեմսիի միջոցով, որ փոխանցում ստացաւ Մխիթարեանէն: 14-րդ վայրկեանին Քոշիլնի նշանակեց երկրորդ կոլը, Մուսթաֆիի փոխանցումէն օգտուելով: 19-րդ վայրկեանին նոյն Ռեմսին նշանակեց երրորդ կոլը, Իուոպիի փոխանցումը օգտագործելով: 37-րդ վայրկեանին Փոլ Աուպամեյանկ հաշիւը դարձուց 4-0, Մխիթարեանի փոխանցումէն օգտուելով: 64-րդ վայրկեանին Քալվէր Լուվին կրճատեց հաշիւը «Էվըրթըն»ի համար, Մարթինայի փոխանցումով: Իսկ 74-րդ Արոն Ռեմսի նշանակեց իր երրորդ եւ «Արսենալ»ի հինգերորդ կոլը, Մխիթարեանի երրորդ փոխանցումով: Մրցումը աւարտեցաւ «Արսենալ»ի 5-1 հաշիւով յաղթանակով: «Մանչեսթըր Սիթի»ն արձանագրեց իր 3-րդ հաւասարութիւնը, երբ հաւասարեցաւ 7-րդ դիրքը գրաւող «Պըրնլի»ի դաշտին վրայ: Իսկ «Մանչեսթըր Եունայթըտ»ի հետ իր կատարած առաջին մրցումին, չիլիցի Ալեքսիս Սանչէզ նշանակեց իր առաջին կոլը:

Անգլիոյ ֆութպոլի ախոյեանութեան 26-րդ հանգրուանի նախավերջին մրցումին, Լիվըրփուլ քաղաքի «Էնֆիլտ» մարզադաշտին վրայ մրցեցան 3-րդ դիրքը գրաւող «Լիվըրփուլ»ը եւ 5-րդ դիրքը գրաւող «Թոթընհէմ Հոցփըր»ի միջեւ: Մրցումին տիրապետող կազմը հիւրերն էին, որոնք ունեցան 63 առ հարիւր համեմատութեամբ առաւելութիւն, ինչպէս նաեւ աւելի անկիւնային եւ դիպուկ հարուածներ: 3-րդ վայրկեանին, Մոհամմատ Սալահ նշանակեց առաջին կոլը «Լիվըրփուլ»ի համար: Միայն 80-րդ վայրկեանին «Թոթընհէմ» նշանակեց հաւասարութեան կոլը, Ուանիամայի միջոցով: 90+1-րդ վայրկեանին դարձեալ Մոհամմատ Սալահն էր նշանակողը, սակայն 90+5-րդ վայրկեանին Քէյն նշանակեց «Թոթընհէմ»ի հաւասարութեան կոլը: Մրցումը աւարտեցաւ 2-2 հաւասար հաշիւով: Ստորեւ տեսնել

արձանագրուած արդիւնքները.
- Պըռնլի - Մանչեսթըր Սիթի 1-1, կոլեր.Կուտմունտսոն 82 - Տանիլօ 22
- Մանչեսթըր Եունայթըտ - Հաւտըրզֆիլտ Թաուն 2-0
կոլեր.Ռ.Լուքաքու 55, Ա.Սանչէզ 68, փոխ.Մաթա
- Լեյսթըր Սիթի - Սուանսի Սիթի 1-1
- Էյ Էֆ Սի Պորնմըթ - Սթոք Սիթի 2-1
- Ուաթֆըրտ - Չելսի 4-1, կոլեր.Տինի տուգ.42, Եանմաաթ 84, Տէօլոֆէօ 88, Փերեյրա 90+1 - Հազար 82
Դասաւորում.
1-Մանչեսթըր Սիթի 26 մ. 22 յ 3 հ 1 պ 69 կէտ 74-19
2-Մանչեսթըր Եուն. 26 մ. 17 յ 5 հ 4 պ 56 կէտ 51-18
3-Լիվըրփուլ 26 մ. 14 յ 9 հ 3 պ 51 կէտ 59-31:

### Անգլիոյ Բաժակ

## Սուանսի Սիթի Յաղթեց

Անգլիոյ ֆութպոլի բաժակի վերջին 32-ի հանգրուանի կրկնուած մրցումներուն արձանագրուեցան հետեւեալ արդիւնքները.
- Պիրմինկհէմ Սիթի (Բ.Դաս.) - Հատըրզֆիլտ Թաուն 1-4 յետ երկրձգ.
- Սուանսի Սիթի - Նոց Քաունթի (Դ.Դաս.) 8-1
- Ռոչտէյլ (Գ.Դաս.) - Միլուոլ (Բ.Դաս.) 1-0

### Իտալիոյ Բաժակ

## Եուվենթիւս Յաղթեց

Իտալիոյ ֆութպոլի բաժակի կիսաւարտական հանգրուանի երթի առաջին մրցումին, 8-րդ դիրքը գրաւող Պերկամօ քաղաքի «Աթալանթա»ն իր դաշտին վրայ ընդունեց 2-րդ դիրքը գրաւող «Եուվենթիւս»ը եւ զիջեցաւ 0-1 հաշիւով: Միակ կոլը նշանակեց «Եուվենթիւս»ի արժանթինցի յարձակող Կոնզալօ Հիկուայինը 3-րդ վայրկեանին: 25-րդ վայրկեանին «Աթալանթա»ի Կոմէզը չի կրցաւ նշանակել տուգանային հարուածէ մը:

Այս հանգրուանի երթի երկրորդ մրցումին, 7-րդ դիրքը գրաւող «Միլան»ը իր դաշտին վրայ ընդունեց 3-րդ դիրքը գրաւող «Լացիօ Ռոմա»ն եւ մրցումը աւարտեցաւ 0-0 հաշիւով հաւասարութեամբ: Հակառակ «Լացիօ»ի ունեցած առաւելութեան անկիւնային հարուածներու եւ դիպուկ հարուածներու թիւով, մրցումը աւարտեցաւ առանց կոլերու:

### Իտալիոյ Ախոյեանութիւն

## Ինթեր Միլան Հաւասարեցաւ 9-րդ Անգամ

Իտալիոյ ֆութպոլի ախոյեանութեան 23-րդ հանգրուանի առաջին մրցումներուն, 4-րդ դիրքը գրաւող «Ինթեր Միլան»ը իր դաշտին վրայ մրցեցաւ 17-րդ դիրքը գրաւող «Քրոթոնէ»ի դէմ եւ արձանագրեց իր 9-րդ հաւասարութիւնը:

Նախավերջին մրցումին, առաջատար «Նափոլի»ն մրցեցաւ վերջին դիրքը գրաւող «Պենեվենթօ»ի դաշտին վրայ եւ տարաւ իր 19-րդ յաղթանակը 2-0 հաշիւով: Պելճիքացի Մերթենս 20-րդ վայրկեանին, Ալանի փոխանցումով եւ սլովաք Համշիք 47-րդ վայրկեանին, Քայեխոնի փոխանցումով նշանակեցին «Նափոլի»ի երկու կոլերը:

Իտալիոյ ֆութպոլի ախոյեանութեան 23-րդ հանգրուանի վերջին մրցումին, 3-րդ դիրքը գրաւող «Լացիօ Ռոմա»ն իր դաշտին վրայ մրցեցաւ 15-րդ դիրքը գրաւող «Ճենովա»ի դէմ եւ կրեց անակնկալ պարտութիւն մը 1-2 հաշիւով: 55-րդ վայրկեանին պուլկարացի Փանտեւ նշանակեց մրցումին առաջին կոլը «Ճենովա»ի համար: 59-րդ վայրկեանին Փարոլօ հաւասարեցուց հաշիւը, Քասերէսի փոխանցումով: Իսկ 90+2-րդ վայրկեանին Լաքսալթ նշանակեց «Ճենովա»ի երկրորդ կոլը, Հոլըմարքի փոխանցումը օգտագործելով:

Այս հանգրուանին արձանագրուեցան հետեւեալ արդիւնքները.
- Սամփտորիա - Թորինօ 1-1
- Ինթեր Միլան - Քրոթոնէ 1-1, կոլեր.Է.Մարթինզ 23 - Ա.Պարպերիս 60
- Հելլաս Վերոնա - Ռոմա 0-1
- Եուվենթիւս - Սասուոլօ 7-0, կոլեր.Սանտրօ 9, Խըտիրա 24, 27, Փիանիչ 38, Հիկուային 63, 74, 83
- Ուտինեզէ - Միլան 1-1, - Աթալանթա - Քիեւօ Վերոնա 1-0

### Ֆրանսայի Լիկայի Բաժակ

## Փարի Սեն Ժերմէն Ապահովեց Աւարտականի Տոմսը

Ֆրանսայի ֆութպոլի Լիկայի բաժակի կիսաւարտական հանգրուանի առաջին մրցումին, 8-րդ դիրքը գրաւող «Ռէն»ը իր դաշտին վրայ ընդունեց առաջատար «Փարի Սեն Ժերմէն»ը: Մէօնիէ 24-րդ վայրկեանին նշանակեց հիւրերուն առաջին կոլը, ապա Մարքինիոս 53-րդ վայրկեանին հաշիւը դարձուց 2-0, 58-րդ վայրկեանին Տօ Սելսօ նշանակեց երրորդ կոլը, Տի Մարիայի փոխանցումէն օգտուելով: 63-րդ վայրկեանին Մպափփէ կարմիր քարտ ստացաւ: 85-րդ վայրկեանին Սախօ կրճատեց հաշիւի տարբերութիւնը «Ռէն»ի համար, իսկ 90+2-րդ վայրկեանին Փրցիչ նաշանակեց «Ռէն»ի երկրորդ կոլը: Մրցումը աւարտեցաւ «Փարի Սեն Ժերմէն»ի 3-2 հաշիւով յաղթանակով:

Կիսաւարտական հանգրուանի երկրորդ մրցումին, 4-րդ դիրքը գրաւող «Մոնաքօ»ն իր դաշտին վրայ ընդունեց 7-րդ դիրքը գրաւող Միշէլ Տէր Զաքարեանի մարզած «Մոնփելիէ»ն: Ռատամէլ Ֆալքաօն 15-րդ վայրկեանին նշանակեց «Մոնաքօ»ի առաջին կոլը, Սիտիպէի փոխանցումով, ապա նոյն Ֆալքաօն նշանակեց երկրորդ կոլը 29-րդ վայրկեանին, Ռոնի Լոփէսի փոխանցումը օգտագործելով: Մրցումը ունէր հաւասարակշռուած ընթացք, սակայն «Մոփելիէ»ն ունէր առաւելութիւն անկիւնային հարուածներու եւ դիպուկ հարուածներու թիւով ու չի կրցաւ օգտագործել այդ առաւելութիւնը:

### Ֆրանսայի Ախոյեանութիւն

## Փարի Սեն Ժերմէն Յաղթեց 20-րդ Անգամ

Շաբաթավերջին տեղի ունեցած Ֆրանսայի ֆութպոլի ախոյեանութեան 24-րդ հանգրուանի ամենահետաքրքրական մրցումն էր «Լիլ» - «Փարի Սեն Ժերմէն» մրցումը: Առաջատար «Փարի Սեն Ժերմէն»ը իր դաշտէն դուրս մրցեցաւ 17-րդ դիրքը գրաւող «Լիլ»ի դէմ եւ տարաւ իր 20-րդ յաղթանակը: Իսկ «Պորտօ» եւ Միշէլ Տէր Զաքարեանի մարզած «Մոնփելիէ»ն շարունակեցին իրենց լաւ արդիւնքներու շարքը եւ յաղթանակ տարին: Ստորեւ տեսնել այս հանգրուանին ցարդ արձանագրուած արդիւնքները.
- Օլիմփիք Մարսէյ - Մեց 6-3, կոլեր.Սանսոն 6, Թովէն 9,44, 56, Ժերմէն 49, Միթրօկլու 75 - Մոլէ 73, 84, Նիան 90
- Լիլ - Փարի Սեն Ժերմէն 0-3, կոլեր.Եուրի 45+1, Նեյմար 77, Լօ Սելսօ 87
- Մոնփելիէ - Անժէ 2-1, - Նիս - Թուլուզ 0-1
- Սթրասպուրկ - Պորտօ 0-2
- Մոնաքօ - Օլիմփիք Լիոնէ 3-2, կոլեր.Ք.Պալտէ 31, Ֆալքաօ 36, Ռ.Լոփէս 88 - Մ.Տիազ 12, Պ.Թրաօրէ 27
- Քան - Նանթ 3-2

Դասաւորում.1-Փարի Սեն Ժերմէն 62 կէտ 75-17, 2-Մարսէյ 51 կէտ 53-27, 3-Մոնաքօ 50 կէտ 56-26, 4-Լիոն 48 կէտ 54-28

Ռմբարկուներ.1-Է.Քավանի-ՓՍԺ 21 կոլ, 2-Նեյմար-ՓՍԺ 18 կոլ, 3-Ռ.Ֆալքաօ-Մոնաքօ 17 կոլ, 4-Ն.Ֆեքիր-Լիոն 16 կոլ:

### Ֆրանսայի Բաժակ

## Փարի Սեն Ժերմէն Եւ Մարսէյ Յաղթական

Շաբթուան ընթացքին սկսան Ֆրանսայի ֆութպոլի բաժակի վերջին 16-ի հանգրուանի մրցումներուն, առաջատար «Փարի Սեն Ժերմէն» եւ «Օլիմփիք Մարսէյ» յաղթեցին իրենց դաշտէն դուրս եւ անցան քառորդ աւարտական հանգրուան: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.
- Պուրկ Ան Պրէս (Բ.Դաս.) - Օլիմփիք Մարսէյ 0-9
- Սոշօ (Բ.Դաս.) - Փարի Սեն Ժերմէն 1-4
կոլեր.Մարթին 13 - Տի Մարիա 1, 58, 62, Քավանի 27
- Օքսեր (Բ.Դաս.) - Վանտէ Լէզ Էրպիէ (Գ.Դաս.) 0-3

### Փորթուկալի Ախոյեանութիւն

## Սփորթինկ Լիզպոնի Առաջին Պարտութիւնը

Շաբաթավերջին տեղի ունեցաւ Փորթուկալի ֆութպոլի ախոյեանութեան 21-րդ հանգրուանին, առաջատար «Սփորթինկ Լիզպոն»ը մրցեցաւ 17-րդ դիրքը գրաւող «Էսթորիլ»ի դաշտին վրայ եւ կրեց այս տարուան իր առաջին պարտութիւնը ու նահանջեց 3-րդ դիրք: Այս հանգրուանի վերջին մրցումին, Գէորգ Ղազարեանի մաս կազմած 6-րդ դիրքը գրաւող «Մարիթիմօ»ն շարունակեց իր անկումը եւ իր դաշտին վրայ պարտուեցաւ 11-րդ դիրքը գրաւող «Փորթիմոնենսէ»էն 0-3 հաշիւով: Հայ մարզիկը բացակայեցաւ այս մրցումէն վնասուածքի պատճառով:

Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները եւ դասաւորումը.
- Էսթորիլ - Սփորթինկ Լիզպոն 2-0
- Փորթօ - Սփորթինկ Պրակա 3-1, կոլեր.Ս.Օլիվեյրա 13, Ռեյէս 38, Ապուպաքար 73 - Ռ.Սիլվա 31
- Պենֆիքա - Ռիօ Աւէ 5-1, կոլեր.Ժարտել 49, Փիցցի 63, Ճոնաս 71, Ռ.Տիաս 83, Խիմենեզ 87 - Կետեւ 9

Դասաւորում.1-Փորթօ 52 կէտ 49-10, 2-Պենֆիքա 50 կէտ 52-14, 3-Սփորթինկ Լ. 50 կէտ 43-13:

Հոլանտայի Բաժակ

## Փի Էս Վի Զիջեցաւ Ֆեյենուրտին

«Թվենթէ» - «Քամպուր» մրցումով սկսան Հոլանտայի բաժակի քառորդ աւարտական հանգրուանի մրցումները: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքը.

- Թվենթէ Էնխքետէ - Քամպուր Լիուվարտըն (Բ.Դաս.) 3-1

Այս հանգրուանի ամենահետաքրքրական մրցումին, 4-րդ դիրքը գրաւող Ռոթըրտամի «Ֆեյենուրտ»ը իր դաշտին վրայ ընդունեց առաջատար «Փի Էս Վի Այնտհովըն»ը: «Փի Էս Վի Այնտհովըն» ունէր 60 առ հարիւր համեմատութեամբ առաւելութիւն: Նոյնինչ «Փի Էս Վի» ունէր առաւելութիւն անկիւնային հարուածներու եւ դիպուկ հարուածներու թիւով, սակայն «Ֆեյենուրտ»ը նշանակեց 3-րդ վայրկեանին Լարսըսի միջոցով եւ 35-րդ վայրկեանին Վիլիենայի միջոցով ու տարաւ վերջնական յաղթանակը 2-0 հաշիւով: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

- Էյ Զէտ Ալքմաար - Փի Ի Սի Զվոլէ 4-1
- Ֆեյենուրտ Ռոթըրտամ - Փի Էս Վի Այնտհովըն 2-0

Հոլանտայի բաժակի քառորդ աւարտական հանգրուանի վերջին մրցումին, 14-րդ դիրքը գրաւող Թիլպըրկի «Վիլէմ»ը իր դաշտին վրայ ընդունեց 17-րդ դիրքը գրաւող Քերքրատէ քաղաքի «Ռոտա Ճէյ Սի»ն: «Վիլէմ» ունէր 60 առ հարիւր տիրապետութիւն, անկիւնային հարուածներու եւ դիպուկ հարուածներու առաւելութիւն: Մրցումին հիմնական եւ երկարաձգուած ժամանակները աւարտեցան 2-2 հաւասար հաշիւով: Տուգանային հարուածներով յաղթեց «Վիլէմ»ը 5-4 հաշիւով ու ապահովեց կիսաւարտական հանգրուանի տոմսը:

Հոլանտայի Ախոյեանութիւն

## Ֆեյենուրտ Կրեց Իր 5-րդ Պարտութիւնը

Հոլանտայի ֆութպոլի ախոյեանութեան 21-րդ հանգրուանին, 4-րդ դիրքը գրաւող «Ֆեյենուրտ»ը իր դաշտէն դուրս մրցեցաւ 10-րդ դիրքը գրաւող Վենլօ քաղաքի «Վի Վի Վի»ին դէմ եւ կրեց իր 5-րդ պարտութիւնը: Այս հանգրուանին արձանագրուեցան հետեւեալ արդիւնքները.

- Փի Էս Վի Այնտհովըն - Փի Ի Սի Զվոլէ 4-0

կոլեր.Լ.Տէ Եոնկ 45 3, 65, 72, Պրենեթ 78

- Այաքս Ամսթերտամ - Էն Էյ Սի Պրետա 3-1

կոլեր.Վան Տէ Պիք 25, Ներէս 39, Զիյէխ 90+3 - Էմպրոգ 6

- Էյ Զէտ Ալքմաար - Ռոտա Ճէյ Սի Քերքրատէ 2-2
- Վի Վի Վի Վենլօ - Ֆեյենուրտ Ռոթըր.1-0, կոլ.Լիմանս տուգ.88
- Վիթէս Արնհէմ - Կրոնինկըն 2-0, Էքսելսիոր Ռոթըր.- Ուտրեխթ 2-2

Դասաւորում.1-Փի Էս Վի 55 կէտ 57-22, 2-Այաքս 48 կէտ 59-18, 3-Էյ Զէտ 43 կէտ 39-22, 4-Ֆեյենուրտ 36 կէտ 41-21:

Պելճիքայի Բաժակ

## Առաջատարը Պարտութիւն Կրեց

Պելճիքայի ֆութպոլի բաժակի մրցաշարքի կիսաւարտական հանգրուանի երթի երկրորդ մրցումին, 10-րդ դիրքը գրաւող «Սթանտար Լիէժ»ը իր դաշտին վրայ ընդունեց առաջատար «Քլէօպ Պրիւժ»ը եւ յաղթեց 4-1 հաշիւով: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքը.

- Սթանտար Լիէժ - Քլէօպ Պրիւժ 4-1

կոլեր.Էմոնտ 19, 25, 54, Էտմիլսըն Ճինիոր 57 - Միթրովիչ 82

Շաբթուան ընթացքին տեղի ունեցան Պելճիքայի ֆութպոլի բաժակի մրցաշարքի կիսաւարտական հանգրուանի դարձի մրցումները: 6-րդ դիրքը գրաւող «Ժենք»ը, որ երթին պարտուած էր 2-3 հաշիւով 8-րդ դիրքը գրաւող «Քորթրիյք»ի դաշտին վրայ, դարձի մրցումին 1-0 հաշիւով յաղթեց եւ օտար դաշտի վրայ աւելի շատ կոլեր նշանակելով հասաւ աւարտական հանգրուան: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքը.

- Ժենք - Քորթրիյք 1-0, երթ.2-3

Սկովտիոյ Ախոյեանութիւն

## Սելթիքի 2-րդ Պարտութիւնը

Սկովտիոյ ֆութպոլի ախոյեանութեան 26-րդ հանգրուանի վերջին մրցումին, 3-րդ դիրքը գրաւող «Ռէյնճըրզ»ը իր դաշտէն դուրս մրցեցաւ 10-րդ դիրքը գրաւող «Փարթիք Թիսըլ»ի դէմ եւ յաղթեց 2-0 հաշիւով ու ամրապնդեց իր դիրքը: Ուինտաս 39-րդ վայրկեանին եւ Թավերնիէ 58-րդ վայրկեանին նշանակեցին կոլերը: Այս հանգրուանին, «Սելթիք» կրեց իր երկրորդ պարտութիւնը «Քիլմարնոք»ի դաշտին վրայ: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները եւ դասաւորումը.

- Քիլմարնոք - Սելթիք 1-0
- Էպըրտին - Հեմիլթըն Աքատեմիքըլ 3-0
- Հարց աֆ Միտլոթիըն - Սենթ Ճոնսթըն 1-0

Դասաւորում.1-Սելթիք 60 կէտ 54-18, 2-Էպըրտին 52 կէտ 43-29, 3-Ռէյնճըրզ 49 կէտ 48-28:

Սկովտիոյ Բաժակ

## Ռէյնճըրզ Յաղթեց

Սկովտիոյ ֆութպոլի բաժակի մրցաշարքի վերջին 32-ի հանգրուանի վերջին մրցումին արձանագրուեցաւ հետեւեալ արդիւնքը.

- Ֆրեյզըրպըրկ (Շրջ.լիկա) - Ռէյնճըրզ 0-3

կոլեր.Ուինտաս տուգ.15, 55, 67

Քոփա Լիպերթատորէս

## Կուարանի, Պանֆիլտ Եւ Ունտըրըրզ Յաղթական

Շաբթուան ընթացքին սկսան Հարաւային Ամերիկայի ակումբներու բաժակի՝ Քոփա Լիպերթատորէսի երկրորդ նախապատրաստական հանգրուանի երթի մրցումները:

Այս հանգրուանի դարձի մրցումներուն, Փարակուէյի «Կուարանի»ն շրջեց երթի իր պարտութիւնը 0-1 հաշիւով եւ դարձին նշանակելով վեց կոլեր անցաւ յաջորդ հանգրուան: Արժանթինի «Պանֆիլտ»ը եւ Չիլիի «Սանթիակօ Ունտըրըրզ»ը նաեւ անցան յաջորդ հանգրուան:

Արձանագրուեցան հետեւեալ արդիւնքները.

- Կուարանի (Փար.) - Քարապոպօ (Վեն.) 6-0, երթ.0-1
- Ինտիփենտիենթէ Տէլ Վայ (Էք.) - Պանֆիլտ (Արժ.) 2-2, երթ.1-1
- Մելկար (Փերու) - Սանթիակօ Ունտըրըրզ (Չիլի) 0-1, երթ.1-1
- Շափեքոյենսէ (Պր.) - Նասիոնալ (Ուրուկ.) 0-1
- Ունիվ.Տէ Քոնսեփսիոն (Չիլի) - Վասքօ Տա Կամա (Պր.) 0-4
- Տեփ.Թաչիրա (Վեն.) - Սանթոս Ֆէ (Քոլ.) 2-3
- Օրիենթէ Փեթրոլերօ (Պոլ.) - Վիլսթըրման (Պոլ.) 1-2
- Օլիմփիա (Փար.) - Ճինիըր (Քոլ.) 1-0

Արժանթինի Ախոյեանութիւն

## Սան Լորենզօ - Պոքա Ճիւնիըրզ 1-1



Արժանթինի ֆութպոլի ախոյեանութեան 14-րդ հանգրուանին տեղի ունեցաւ գագաթի մրցումը 2-րդ դիրքը գրաւող «Սան Լորենզօ»ի եւ առաջատար «Պոքա Ճիւնիըրզ»ի միջեւ աւարտեցաւ 1-1 հաշիւով հաւասարութեամբ: Պոթթա բացաւ մրցումին հաշիւը «Սան Լորենզօ»ի համար 4-րդ վայրկեանին, իսկ 15-րդ վայրկեանին Քարլոս Թեվէզ նշանակեց «Պոքա»ի հաւասարութեան կոլը: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները եւ դասաւորումը.

- Ռոզարիօ Սանթրալ - Ունիոն Սանթա Ֆէ 1-0
- Քոլոն - Ինտիփենտիենթէ 0-1, - Ռասինկ - Հուրաքան 4-0

Դասաւորում.1-Պոքա Ճիւնիըրզ 34 կէտ 28-6, 2-Սան Լորենզօ 28 կէտ 19-9, 3-Ունիոն Սանթա Ֆէ 25 կէտ 18-11:

Լիբանանի Ախոյեանութիւն

## Նըժմէ Հազիւ Յաղթեց

Շաբաթավերջին տեղի ունեցած Լիբանանի ֆութպոլի ախոյեանութեան 16-րդ հանգրուանին, 2-րդ դիրքը գրաւող «Նըժմէ»ն մրցեցաւ 8-րդ դիրքը գրաւող «Ռասինկ»ին դէմ եւ արձանագրեց իր 12-րդ յաղթանակը վերջին

վայրկեանին նշանակուած կոլով: «Ռասինկ»ը այս տարեշրջանին բաւական զօրաւոր խումբ է եւ լուրջ մրցակից է առաջատարներուն: Այս մրցումին ալ խումբը ունէր կուռ պաշտպանութիւն եւ կը կատարէր վտանգաւոր հակայարձակումներ: Միայն մրցումի վերջին վայրկեանին պաշտպան Ալի Համամ գլուխով նշանակեց մրցումին միակ կոլը: «Նըժմէ» յաղթեց 1-0 հաշիւով ու պահեց ճնշումը առաջատար «Ալ Ահըտ»ի վրայ: «Անսար» շարունակեց իր անկայուն արդիւնքներու շարքը, երբ պարտուեցաւ վերջին դիրքը գրաւող Պըրժ Շմալի «Ալ Իսլահ»էն: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները եւ դասաւորումը.

- Ախաա Ահլի Ալէյ - Թրիփոլի 2-1 կոլեր.Ա.Հիժազի 33, 61 - Ա.Ալ Մալ տուգ.88
- Ալ Ահըտ - Թատամոն Սուր 2-0, կոլեր.Հ.Շըհիթօ 4, Ա.Չրէյք 86
- Ալ Իսլահ ՊՇ - Անսար 3-1, կոլեր.Մ.Ալժնեյտի սխալ.45, Մ.Տիոն 63, Ք.Ալիժա 74 - Մ.Ալժնեյտի 69
- Ալ Շապապ Ալ Արապի - Սաֆա 0-0
- Սալամ Զղարթա - Նապի Շիթ 4-3

## Լիբանանի Բ.Դասակարգի Ախոյեանութիւն

### Շապապ Ալ Սահէլ Անկասելի

Լիբանանի Բ.դասակարգի ֆութպոլի ախոյեանութեան 16-րդ հանգրուանի մրցումներուն, առաջատար «Շապապ Ալ Սահէլ»ը դժուարութեամբ յաղթեց «Ալ Ահլի Սայտա»ին: «Ալ Շապապ Ղազիյէ» եւ «Ալ Պըրժ» ճնշումը պահեցին առաջատարին վրայ, յաղթանակներ արձանագրելով: Այս հանգրուանին արձանագրուեցան հետեւեալ արդիւնքները.

- Շապապ Ալ Սահէլ - Ալ Ահլի Սայտա 1-0
- Ալ Շապապ Ղազիյէ - Նասեր Պար Իլիաս 3-2
- Ալ Պըրժ - Ալ Ամալ Մաարաքէ 4-2
- Իժթիմաաի Թրիփ. - Հ.Մ.Ը.Մ. 1-3, - Ալ Մապարրա - Հիքմէ 1-1
- Շապապ Մաժտալ Այնժար - Ալ Ահլի Նապաթիյէ 1-3

Դասաւորում.1-Շապապ Ալ Սահէլ 38 կէտ 41-17, 2-Ալ Շապապ Ղազիյէ 36 կէտ 40-15, 3-Ալ Պըրժ 35 կէտ 30-12, 9-Հ.Մ.Ը.Մ. 16 կէտ 17-29:

## Լիբանանի Գ.Դասակարգի Ախոյեանութիւն

### Ալ Նահտա Եւ Շապապ 2-րդ Փուլ Հասան

Լիբանանի Գ.դասակարգի ֆութպոլի ախոյեանութեան 14-րդ հանգրուանին, «Հ.Մ.Մ.»-ի երկու մրցակիցները՝ «Ալ Նահտա Պար Իլիաս» եւ «Շապապ Ալ Պըրժ» յաղթանակ տարին եւ հասան երկրորդ փուլ: Այս հանգրուանին արձանագրուեցան հետեւեալ արդիւնքները.

- Ալ Շարք - Շապապ Ալ Պըրժ 0-1
- Նըժմէթ Ալ Սահրա - Ալ Նահտա Պար Իլիաս 0-1
- Ալ Ուահտա Մարժ - Ալ Իրշատ Շըհիմ 5-3

Վերջնական դասաւորում.

| | | |
|---|---|---|
| 1-Ալ Նահտա Պար Իլիաս | 12 մրց.7 յ 3 հ 2 պ 24 կէտ 23-13 | |
| 2-Շապապ Ալ Պըրժ | 12 մրց.6 յ 5 հ 1 պ 23 կէտ 16-5 | |
| 3-Հ.Մ.Մ. | 12 մրց.6 յ 4 հ 2 պ 22 կէտ 30-20 | |
| 4-Ալ Իրշատ Շըհիմ | 12 մրց.5 յ 3 հ 4 պ 18 կէտ 33-31 | |

Գ.դասակարգի ախոյեանութեան առաջին փուլի աւարտին, հետեւեալ վեց խումբերը պիտի մրցին որոշելու համար Բ.դասակարգ բարձրացող երկու խումբերը. Պըրժ Ժպէյլ, Ալ Խյուլ, Ալ Մաժտ Թրիփոլի, Ահլի Սարպա, Շապապ Ալ Պըրժ եւ Ալ Նահտա Պար Իլիաս:

Իսկ հետեւեալ հինգ խումբերը պիտի մրցին որոշելու համար Գ.դասակարգին հրաժեշտ տուող երեք խումբերը. Ալ Սալամ Սուր, Ալ Ֆաժըր Արապսալիմ, Ամալ Սալամ Զղարթա, Շեքքա եւ Նըժմէթ Ալ Սահրա:

## Աուպամեյանկ Արսենալի Մէջ

Լոնտոնի «Արսենալ» ակումբին միանալու կապոնցի «Պորուսիա Տորթմունտ»ի յարձակող Փիեռ Աուպամեյանկի հիմնական պատճառը Մխիթարեանի յորդորն էր իրեն: Կապոնցի ֆութպոլիստը յայտնեց, որ ինք եւ Մխիթարեանը լաւ ընկերներ են եւ զիրար լաւ կը հասկնան: Ան նաեւ յայտնեց, որ Մխիթարեանի «Արսենալ»ին միանալն էր պատճառը, որ զինք մղեց միանալու նոյն ակումբին:

## Ռունիի Բացայայտումը Մխիթարեանի Մասին

Անգլիոյ «Մանչեսթըր Եունայթըտ» խումբի նախկին եւ ներկայիս «Էվըրթըն»ի ֆութպոլիստ Ուէյն Ռունի բացատրեց թէ ինչո՞ւ Մխիթարեան չյաջողեցաւ «Մանչեսթըր Եունայթըտ»ի մէջ: Ան յայտնեց որ Մխիթարեան տաղանդաւոր ֆութպոլիստ է եւ պէտք է քիչ մը ազատ ձգուի իր կարողութիւնները ցոյց տալու համար: «Պորուսիա Տորթմունտ»ի մէջ ունէր այդ մթնոլորտը Եեօրկըն Քլոփի ղեկավարութեան տակ, մինչ Մուրինիօ խիստ մարզիչ է: Ըստ Ռունիի, «Արսենալ»ի մէջ Մխիթարեան կը յաջողի, որովհետեւ խումբին մէջ կան իրեն հասկցող մարզիկներ, ինչպէս Աուպամեյանկ եւ Ռեմսի:

## Օզպիլիս Միացաւ Շերիֆին

Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Արազ Օզպիլիս ձգեց «Պեշիկթաշ»ը եւ միացաւ Մոլտովայի Թիրասփոլ քաղաքի «Շերիֆ»ին: Խումբը Մոլտովայի լիկային մէջ կը գրաւէ բարձր դիրք եւ լաւ արդիւնքներ արձանագրեց Իւրոպա Լիկին մէջ: Խումբը 17 անգամ շահած է երկրին ախոյեանութեան տիտղոսը եւ ներկայիս առաջատարն է:

## Յաջորդ Օրերու Մրցումներու Յայտագիր

Ստորեւ տեսնել յաջորդ օրերու մրցումներու յայտագիրը.

**Հինգշաբթի 8 Փետրուար 2018**

**ԼԻԲԱՆԱՆԻ ԲԱԺԱԿԻ 1/4-ՐԴ ԱՒԱՐՏ.ՀԱՆԳՐՈՒԱՆ**
Ժամը 16:00 Անսար (6) - Նըժմէ (2), Մարզական Աւան
**ՍՊԱՆԻՈՅ ՔՈՓԱ ՏԷԼ ՌԷՅԻ ԿԻՍԱՒԱՐՏ.ՀԱՆԳՐՈՒԱՆԻ ԴԱՐՁ**
Ժամը 22:30 Վալենսիա (3) - Պարսելոնա (1)
**ՖՐԱՆՍԱՅԻ ԲԱԺԱԿԻ 1/8-ՐԴ ԱՒԱՐՏ.ՀԱՆԳՐՈՒԱՆ**
Ժամը 22:00 Կրընոպըլ Ֆութ38 (Գ.Դաս.) - Սթրասպուրկ (14)
**ՊԵԼՃԻՔԱՅԻ ԲԱԺԱԿԻ ԿԻՍԱՒԱՐՏ.ՀԱՆԳՐՈՒԱՆԻ ԴԱՐՁ**
Ժամը 21:45 Քլէօպ Պրիւժ (1) - Սթանտար Լիէժ (9)
**ՀՈԼԱՆՏԱՅԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ 22-ՐԴ ՀԱՆԳՐՈՒԱՆ**
Ժամը 19:30 Էյ Տի Օ Տէն Հաակ (10) - Վիթէս Արնհէմ (6)
Ժամը 21:45 Ֆեյենուրտ Ռոթըր.(5) - Կրոնինկըն (13)
**ՔՈՓԱ ԼԻՊԵՐԹԱՏՈՐԷՍԻ 2-ՐԴ ՆԱԽԱՊԱՏՐ.ՀԱՆԳՐՈՒԱՆԻ ԴԱՐՁ**
Ժամը 02:00 Սանթա Ֆէ (Քոլ.) - Տեփ.Թաչիրա (Վեն.)
Ժամը 02:30 Վիլսթըրման (Պոլ.) - Օրիենթէ Փեթրոլերօ (Պոլ.)
Ժամը 04:15 Ճիւնիըր (Քոլ.) - Օլիմփիա (Փար.)
**ԹԵՆԻՍԻ ՍՈՖԻԱՅԻ ՄՐՑԱՇԱՐՔԻ 1/8-ՐԴ ԱՒԱՐՏ.ՀԱՆԳՐՈՒԱՆ**
Ժամը 11:00-էն սկսեալ eurosport 2 կայանէն
**ՓԻՈՆԿՉԱՆԿԻ ՈՂԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐՈՒ 2-ՐԴ ՕՐ**
Ժամը 02:00, 13:00 Քըրլինկի տղոց Ա.եւ 2-րդ հանգրուանի մրց.
Ժամը 04:00 Դահոյկով ցատկի տղոց եւ կիներու զտումի մրց.
Ժամը 04:00 Վայրէջքի-downhill տղոց նախապատր.մրցում
Ժամը 07:30 Սահնակի-luge տղոց նախապատր.մրցումներ
Ժամը 11:30 սահնակի-luge կիներու նախապատր.մրցումներ
Ժամը 12:45 Պիաթլոնի տղոց 10 քմ մրցումի նախապատր.մրցում
**ՀԵԾԵԼԱՐՇԱՒԻ ՓՐՈՎԱՆՍԻ ՇՐՋԱՎԱՅՔ**
Ժամը 17:00-էն սկսեալ eurosport 2 կայանէն

**Ուրբաթ 9 Փետրուար 2018**

**ՍՊԱՆԻՈՅ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ 23-ՐԴ ՀԱՆԳՐՈՒԱՆ**
Ժամը 22:00 Աթլեթիք Պիլպաօ (12) - Լաս Փալմաս (8)
**ԳԵՐՄԱՆԻՈՅ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ 22-ՐԴ ՀԱՆԳՐՈՒԱՆ**
Ժամը 21:30 Ար Պի Լայփցիկ (7) - Աուկսպուրկ (5)
**ԻՏԱԼԻՈՅ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ 24-ՐԴ ՀԱՆԳՐՈՒԱՆ**
Ժամը 21:45 Ֆիորենթինա (14) - Եուվենթիւս (8)
**ՖՐԱՆՍԱՅԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ 25-ՐԴ ՀԱՆԳՐՈՒԱՆ**
Ժամը 21:45 Սենթ Էթիէն (14) - Օլիմփիք Մարսէյ (8)
**ԱՐԺԱՆԹԻՆԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ 15-ՐԴ ՀԱՆԳՐՈՒԱՆ**
Ժամը 00:00 Ունիոն Սանթէ Ֆէ (27) - Արսենալ (16)
Ժամը 02:15 Նիւըլ Օլտ Պոյզ (4) - Քոլոն (2)
**ԹԵՆԻՍԻ ՍՈՖԻԱՅԻ ՄՐՑԱՇԱՐՔԻ 1/4-ՐԴ ԱՒԱՐՏ.ՀԱՆԳՐՈՒԱՆ**
Ժամը 11:00-էն սկսեալ eurosport 2 կայանէն
**ՓԻՈՆԿՉԱՆԿԻ ՈՂԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐՈՒ 3-ՐԴ ՕՐ**
Ժամը 01:30, 06:30 Քըրլինկի խառն 3-րդ եւ 4-րդ հանգրուանի մրց.
Ժամը 02:00 Սահնակի-luge տղոց նախապատր.մրցումներ
Ժամը 03:00 Գեղասահքի-figure skating տղոց կարճ ծրագիր
Ժամը 03:00 Ազատ ոճի դահոյկի կիներու մոկուլ մրցումի զտում
Ժամը 04:00 Վայրէջքի-downhill տղոց նախապատր.մրցում
Ժամը 04:45 Գեղասահքի-figure skating զոյգերու կարճ ծրագիր
Ժամը 04:45 Ազատ ոճի դահոյկի տղոց մոկուլ մրցումի զտում
Ժամը 13:00 Ձմեռնային Ողիմպիական Խաղերու Բացման Արար.
**ՀԵԾԵԼԱՐՇԱՒԻ ՓՐՈՎԱՆՍԻ ՇՐՋԱՎԱՅՔԻ Ա.ՀԱՆԳՐՈՒԱՆ**
Ժամը 13:45-էն սկսեալ eurosport 2 կայանէն

**Շաբաթ 10 Փետրուար 2018**

**ԼԻԲԱՆԱՆԻ ԲԱԺԱԿԻ 1/4-ՐԴ ԱՒԱՐՏ.ՀԱՆԳՐՈՒԱՆ**
Ժամը 13:30 Նապի Շիթ (4) - Ախաա Ահլի Ալէյ (12), Ալ Ահըտի մարզ.
**ԼԻԲԱՆԱՆԻ Բ.ԴԱՍԱԿԱՐԳԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ 17-ՐԴ ՀԱՆԳՐՈՒԱՆ**
Ժամը 14:15 Հ.Մ.Ը.Մ.(4) - Ալ Մապարրա (12), Պուրճ Համուտի քաղաք.
**ՍՊԱՆԻՈՅ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ 23-ՐԴ ՀԱՆԳՐՈՒԱՆ**
Ժամը 14:00 Վիյարէալ (18) - Տեփ.Ալավէս (17)
Ժամը 17:15 Մալակա (3) - Աթլեթիքօ Մատրիտ (4)
Ժամը 19:30 Լեկանէս (20) - Էյպար (10)
Ժամը 21:45 Ռէալ Մատրիտ (5) - Ռէալ Սոսիետատ (15)
**ԳԵՐՄԱՆԻՈՅ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ 22-ՐԴ ՀԱՆԳՐՈՒԱՆ**
Ժամը 16:30 Պորուսիա Տորթմունտ (1) - Համպուրկ (9)
Ժամը 19:30 Պայըրն Միւնիխ (16) - Շալքէ04 (11)
**ԱՆԳԼԻՈՅ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ 27-ՐԴ ՀԱՆԳՐՈՒԱՆ**
Ժամը 14:30 Թոթընհեմ Հոցփըր (Գ.Դաս.) - Արսենալ (7)
Ժամը 17:00 Էվըրթըն (18) - Քրիսթըլ Փալաս (10)
Ժամը 19:30 Մանչեսթըր Սիթի (Դ.Դաս.) - Լեյսթըր Սիթի (5)
**ԻՏԱԼԻՈՅ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ 24-ՐԴ ՀԱՆԳՐՈՒԱՆ**
Ժամը 16:00 ՍՓԱԼ Ֆերրարա (14) - Միլան (8)
Ժամը 19:00 Քրոթոնէ (14) - Աթալանթա (8)
Ժամը 21:45 Նափոլի (13) - Լացիօ Ռոմա (2)
**ՖՐԱՆՍԱՅԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ 25-ՐԴ ՀԱՆԳՐՈՒԱՆ**
Ժամը 18:00 Թուլուզ (1) - Փարի Սէն Ժերմէն (7)
Ժամը 21:00 Անժէ (9) - Մոնաքօ (5)
**ՓՈՐԹՈՒԿԱԼԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ 22-ՐԴ ՀԱՆԳՐՈՒԱՆ**
Ժամը 18:00 Ռիօ Աւէ (15) - Մարիթիմօ (1)
Ժամը 20:15 Սփորթինկ Պրակա (1) - Վիթորիա Սեթուպալ (7)
Ժամը 22:30 Փորթիմոնենսէ (9) - Պենֆիքա (5)
**ՀՈԼԱՆՏԱՅԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ 23-ՐԴ ՀԱՆԳՐՈՒԱՆ**
Ժամը 19:30 Ութրեխթ (13) - Փի Ի Սի Զվոլէ (12)
Ժամը 20:45 Սփարթա Ռոթըր.(15) - Փի Էս Վի Այնտհովըն (1)
Ժամը 21:45 Էյ Ձէտ Ալքմաար (15) - Վի Վի Վի Վենլօ (1)
**ՍԿՈՎՏԻՈՅ ԲԱԺԱԿԻ 1/8-ՐԴ ԱՒԱՐՏ.ՀԱՆԳՐՈՒԱՆ**
Ժամը 14:15 Սելթիք (13) - Փարթիք Թիսըլ (12)
Ժամը 17:00 Հարց աֆ Միտլոթիըն (15) - Սենթ Ճոնսթըն (1)
**ԱՐԺԱՆԹԻՆԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ 15-ՐԴ ՀԱՆԳՐՈՒԱՆ**
Ժամը 22:00 Ժիմնազիա Լա Փլաթա (10) - Էսթուտիանթէս (19)
Ժամը 00:15 Օլիմփօ (22) - Ռասինկ (18)
Ժամը 02:30 Ինտիփենտիենթէ (1) - Սան Լորենզօ (7)
**ԹԵՆԻՍԻ ՍՈՖԻԱՅԻ ՄՐՑԱՇԱՐՔԻ ԿԻՍԱՒԱՐՏ.ՀԱՆԳՐՈՒԱՆ**
Ժամը 11:00-էն սկսեալ eurosport 2 կայանէն
**ՓԻՈՆԿՉԱՆԿԻ ՈՂԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐՈՒ 4-ՐԴ ՕՐ**
Ժամը 02:00, 13:00 Քըրլինկի խառն 5-րդ եւ 6-րդ հանգրուանի մրց.
Ժամը 02:00, 06:00 Սնոպորտի slopestyle տղոց զտումի մրցումներ
Ժամը 04:00 Վայրէջքի-downhill տղոց նախապատր.մրցում
Ժամը 07:30 Սահնակի-luge կիներու նախապատր.մրցումներ
Ժամը 09:15 Դահուկարշաւի կիներու 7,5+7,5 քմ սքիաթլոն
Ժամը 09:30 Դահոյկով ցատկի կիներու եւ տղոց զտումի մրցում
աւարտական ժամը 15:30-ին
Ժամը 09:40, 14:10 Սառի հոքիի կիներու Բ.խմբակի զտումի մրց.
Ժամը 12:00 Չմշկարշաւի-short track տղոց 1500 մ, կիներու 500 մ մրց.
աւարտական ժամը 14:20-ին
Ժամը 12:10 Սահնակի-luge տղոց Ա.եւ 2-րդ զտումի մրցում
Ժամը 13:00 Չմշկարշաւի-speed skating կիներու 3000 մ մրց.
Ժամը 13:15 Պիաթլոնի 7,5 քմ կիներու մրցում
**ՀԵԾԵԼԱՐՇԱՒԻ ՓՐՈՎԱՆՍԻ ՇՐՋԱՎԱՅՔԻ 2-ՐԴ ՀԱՆԳՐՈՒԱՆ**
Ժամը 13:45-էն սկսեալ eurosport 2 կայանէն

**Կիրակի 11 Փետրուար 2018**

**ԼԻԲԱՆԱՆԻ ԲԱԺԱԿԻ 1/4-ՐԴ ԱՒԱՐՏ.ՀԱՆԳՐՈՒԱՆ**
Ժամը 13:30 Թատամոն Սուր (11) - Սալամ Զղարթա (7), Պհամտունի քաղ.
**ԼԻԲԱՆԱՆԻ Դ.ԴԱՍԱԿԱՐԳԻ ԱԽՈՅԵԱՆ.ՄՆԱԼՈՒ ՓԼԵՅ ՕՖ**
Ժամը 14:30 Ռիատի Քաֆարմաթթա - Հ.Մ.Ը.Մ.ՊՀ, Քֆարշիմայի մարզ.
**ՍՊԱՆԻՈՅ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ 23-ՐԴ ՀԱՆԳՐՈՒԱՆ**
Ժամը 13:00 Սեւիլիա (13) - Ժիրոնա (14)
Ժամը 17:15 Պարսելոնա (2) - Խեթաֆէ (19)
Ժամը 19:30 Սելթա Տէ Վիկօ (6) - Էսփանիոլ (9)
Ժամը 21:45 Վալենսիա (1) - Լեւանթէ (16)
**ԳԵՐՄԱՆԻՈՅ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ 22-ՐԴ ՀԱՆԳՐՈՒԱՆ**
Ժամը 16:30 Շթութկարթ (2) - Պոր.Մէոնշընկլատպախ (15)
Ժամը 19:00 Վերտէր Պրեմըն (10) - Վոլֆսպուրկ (13)
**ԱՆԳԼԻՈՅ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ 27-ՐԴ ՀԱՆԳՐՈՒԱՆ**
Ժամը 14:00 Հատըրզֆիլտ Թաուն (3) - Էյ Էֆ Սի Պորնմըթ (15)
Ժամը 16:15 Նիւքեսըլ Եունայթըտ (3) - Մանչեսթըր Եունայթըտ (15)
Ժամը 18:30 Սաութհեմփթըն (Բ.Դաս.) - Լիվըրփուլ (1)
**ԻՏԱԼԻՈՅ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ 24-ՐԴ ՀԱՆԳՐՈՒԱՆ**
Ժամը 13:30 Սասուոլօ (18) - Քալիարի (4)
Ժամը 16:00 Ինթէր Միլան (1) - Պոլոնիա (12)
Ժամը 21:45 Ռոմա (5) - Պենեվենթօ (6)
**ՖՐԱՆՍԱՅԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ 25-ՐԴ ՀԱՆԳՐՈՒԱՆ**
Ժամը 16:00 Սթրասպուրկ (18) - Թրուա (10)
Ժամը 18:00 Նանթ (12) - Լիլ (2)
Ժամը 22:00 Օլիմփիք Լիոնէ (3) - Ռէն (4)
**ՓՈՐԹՈՒԿԱԼԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ 22-ՐԴ ՀԱՆԳՐՈՒԱՆ**
Ժամը 18:00 Չավէշ (1) - Փորթօ (7)
Ժամը 20:00 Սփորթինկ Լիզպոն (1) - Ֆեյրենսէ (7)
**ՀՈԼԱՆՏԱՅԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ 23-ՐԴ ՀԱՆԳՐՈՒԱՆ**
Ժամը 13:30 Այաքս Ամսթերտամ (6) - Թվենթէ Էնխքետէ (2)
Ժամը 15:30 Վիթէս Արնհէմ (5) - Ֆեյենուրտ Ռոթըր.(8)
**ՍԿՈՎՏԻՈՅ ԲԱԺԱԿԻ 1/8-ՐԴ ԱՒԱՐՏ.ՀԱՆԳՐՈՒԱՆ**
Ժամը 16:30 Այր Եունայթըտ (Գ.Դաս.) - Ռէյնճըրզ (12)
Ժամը 18:30 Էպըրտին (15) - Տանտի Եունայթըտ (Բ.Դաս.)
**ԱՐԺԱՆԹԻՆԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ 15-ՐԴ ՀԱՆԳՐՈՒԱՆ**
Ժամը 22:00 Թալերէս Քորտոպա (26) - Պանֆիլտ (9)
Ժամը 00:15 Պոքա Ճիւնիըրզ (5) - Թեմփըրլէյ (17)
Ժամը 02:30 Լանուս (3) - Ռիվըր Փլէյթ (14)
**ԹԵՆԻՍԻ ՍՈՖԻԱՅԻ ՄՐՑԱՇԱՐՔԻ ԱՒԱՐՏ.ՀԱՆԳՐՈՒԱՆ**
Ժամը 14:00-էն սկսեալ eurosport 2 կայանէն
ՓԻՈՆԿՉԱՆԿԻ ՈՂԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐՈՒ 5-ՐԴ ՕՐ
Ժամը 01:30 Սահնակի-luge կիներու 5-րդ եւ 6-րդ զտումի մրցում
Ժամը 02:00, 13:00 Քըրլինկի խառն 7-րդ եւ 8-րդ հանգրուանի մրց.
Ժամը 03:00 Սնոպորտի slopestyle տղոց զտումի մրցումներ
Ժամը 03:00 Գեղասահքի-figure skating զոյգերու պարի կարճ ծրագիր
Ժամը 04:00 Վայրէջքի-downhill տղոց աւարտ.մրցում
Ժամը 04:45 Գեղասահքի-figure skating կիներու կարճ ծրագիր
Ժամը 06:30 Սնոպորտի slopestyle կիներու զտումի մրցումներ
Ժամը 06:40 Գեղասահքի-figure skating զոյգերու պարի կարճ ծրագիր
Ժամը 08:00 Սահնակի-luge զոյգերու Ա. եւ 2-րդ զտումի մրցում
Ժամը 08:00 Նորտիք քոմպինէ Ա., 2-րդ եւ 3-րդ ցատկի մրցում
Ժամը 08:15 Դահուկարշաւի տղոց 15+15 քմ սքիաթլոն
Ժամը 09:00 Չմշկարշաւի-speed skating տղոց 5000 մ մրց.
Ժամը 09:40, 14:10 Սառի հոքիի կիներու Ա.խմբակի զտումի մրց.
Ժամը 12:30 Ազատ ոճի դահոյկի կիներու մոկուլ մրցում
աւարտական ժամը 15:10-ին
Ժամը 13:00 Դահոյկով ցատկի կիներու զտումի մրցում
Ժամը 13:00 Սահնակի-luge տղոց 3-րդ եւ 4-րդ զտումի մրցում
Ժամը 13:15 Պիաթլոնի 10 քմ տղոց մրցում
**ՀԵԾԵԼԱՐՇԱՒԻ ՓՐՈՎԱՆՍԻ ՇՐՋԱՎԱՅՔԻ 3-ՐԴ ՀԱՆԳՐՈՒԱՆ**
Ժամը 12:30-էն սկսեալ eurosport 2 կայանէն

**Երկուշաբթի 12 Փետրուար 2018**

**ՍՊԱՆԻՈՅ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ 23-ՐԴ ՀԱՆԳՐՈՒԱՆ**
Ժամը 22:00 Տեփ.Լա Քորունիա (7) - Ռէալ Պեթիս (11)
**ԱՆԳԼԻՈՅ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ 27-ՐԴ ՀԱՆԳՐՈՒԱՆ**
Ժամը 22:00 Չելսի (3) - Ուեսթ Պրոմիչ Ալպիըն (15)
**ԱՐԺԱՆԹԻՆԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ 15-ՐԴ ՀԱՆԳՐՈՒԱՆ**
Ժամը 00:00 Աթլեթիքօ Թուք. (15) - Սան Մարթին Սան Խուան (23)
Ժամը 02:15 Հուրաքան (6) - Ռոզարիօ Սանթրալ (13)
**ԱՍԻՈՅ ՉԵՄՓԻԸՆՇ ԼԻԿԻ ԶՏՈՒՄԻ Ա.ՀԱՆԳՐՈՒԱՆ**
Ժամը 13:00 Լոքոմոթիւ (Իւզպ.) - Ալ Ուահտա (ԱՄԷ)
Ժամը 15:15 Ալ Տուհայլ (Քաթ.) - Զոպ Ահան (Իրան)
Ժամը 17:30 Թրաքթոր Սազի (Իրան) - Ալ Ահլի (Ս.Արաբիա)
**ԱՍԻՈՅ ՖԵՏԵՐԱՍԻՈՆԻ ԲԱԺԱԿԻ ԶՏՈՒՄԻ Ա.ՀԱՆԳՐՈՒԱՆ**
Ժամը 15:00 Ալ Ահըտ (Լիբ.) - Ալ Զաուրաա (Իրաք)
**ՓԻՈՆԿՉԱՆԿԻ ՈՂԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐՈՒ 6-ՐԴ ՕՐ**
Ժամը 02:00 Քըրլինկի խառն կիսաւարտ. հանգրուանի մրց.
Ժամը 02:35 Սքելեթընի կիներու զտումի Ա.եւ 2-րդ մրց.
Ժամը 03:00 Սնոպորտի slopestyle կիներու զտումի մրցումներ
աւարտական ժամը 04:00-ին
Ժամը 03:00 Գեղասահքի-figure skating տղոց ազատ ծրագիր
Ժամը 03:15 Մեծ ոլորավայրէջք-giant slalom կիներու Ա.մրցում

Ժամը 04:00 Ալպեան քոմպինէ վայրէջքի-downhill տղոց մրցում
Ժամը 04:10 Գեղասահքի-figure skating կիներու ազատ ծրագիր
Ժամը 04:50 Սքելեթընի տղոց զտումի Ա.եւ 2-րդ մրց.
Ժամը 05:20 Գեղասահքի-figure skating զոյգերու պարի աւարտ.
Ժամը 06:30, 07:15 Սնոպորտի halfpipe կիներու զտումի մրցումներ
Ժամը 06:45 Մեծ ոլորավայրէջք-giant slalom կիներու 2-րդ մրցում
Ժամը 08:00 Նորտիք քոմպինէ 4-րդ, 5-րդ եւ 6-րդ ցատկի մրցում
Ժամը 08:30 Սահնակի-luge զոյգի 3-րդ եւ 4-րդ զտումի մրցում
Ժամը 09:40, 14:10 Սառի հոքիի կիներու 2-րդ խմբակի զտումի մրց.
Ժամը 12:10 Պիաթլոնի կիներու 10 քմ հալածանքի մրցում
Ժամը 12:30, 14:00, 14:30 Ազատ ոճի դահոյկի տղոց մոկուլ մրց. աւարտական ժամը 15:10-ին
Ժամը 12:50 Սահնակի-luge կիներու Ա. եւ 2-րդ զտումի մրցում
Ժամը 13:00 Քըրլինկի խառն կիսաւարտ. հանգրուանի մրց.
Ժամը 13:35 Դահոյկով ցատկի կիներու զտումի մրցում աւարտական ժամը 15:35-ին
Ժամը 14:00 Պիաթլոնի տղոց 12,5 քմ հալածանքի մրցում
Ժամը 14:30 Չմշկարշաւի-speed skating կիներու 1500 մ մրց.

**Երեքշաբթի 13 Փետրուար 2018**

**ՉԵՄՓԻԸՆՍ ԼԻԿԻ 1/8-ՐԴ ԱՒԱՐՏ.ՀԱՆԳՐՈՒԱՆԻ ԵՐԹ**
Ժամը 21:45 Եուվենթիւս - Թոթընհէմ Հոցփըր
Ժամը 21:45 Պազըլ - Մանչեսթըր Սիթի
**ԻՒՐՈՊԱ ԼԻԿԻ 1/8-ՐԴ ԱՒԱՐՏ.ՀԱՆԳՐՈՒԱՆԻ ԵՐԹ**
Ժամը 19:00 Ցրվենա Զվեզտա - ԲԿՄԱ Մոսկուա
**ՔՈՓԱ ՍՈՒՏԱՄԵՐԻՔԱՆԱՅԻ Ա.ՀԱՆԳՐՈՒԱՆԻ ԵՐԹ**
Ժամը 00:15 Սփորթ.Լուքուենիօ (Փար.) - Տէփ.Քուենսա (Էքուատոր)
Ժամը 00:15 Քախամարքա (Փերու) - Ռամփլա Ճիւնիըրզ (Ուրուկ.)
Ժամը 02:30 Զամորա (Վեն.) - Քոլոն (Արժ.)
**ԱՍԻՈՅ ՉԵՄՓԻԸՆՍ ԼԻԿԻ ԶՏՈՒՄԻ Ա.ՀԱՆԳՐՈՒԱՆ**
Ժամը 10:30 Մելպըրն Վիքթորի (Աւստր.) - Ուլսան (Հար.Քորէա)
Ժամը 12:00 Քաուազաքի Ֆրոնթալ (Ճաբ.) - Շանկհայ (Չին.)
Ժամը 12:30 Ժոնպուք Մոթըրզ (Հար.Քոր.) - Քաշիուա Ռեյսոլ (Ճաբ.)
Ժամը 14:00 Թիանճին Քուանճիան (Չին.) - Քիչի (Հոնկ Քոնկ)
Ժամը 15:45 Փերսեփոլիս (Իրան) - Նասաֆ (Իւզպ.)
Ժամը 17:00 Ալ Ուասլ (ԱՄԷ) - Ալ Սատ (Քաթ.)
**ԱՍԻՈՅ ՖԵՏԵՐԱՍԻՈՆԻ ԲԱԺԱԿԻ ԶՏՈՒՄԻ Ա.ՀԱՆԳՐՈՒԱՆ**
Ժամը 17:30 Տոֆար (Օման) - Անսար (Լիբ.)
**ԹԵՆԻՍԻ ՏՈՀԱՅԻ ԿԻՆԵՐՈՒ ՄՐՑԱՇԱՐՔԻ 1/16-ՐԴ ԱՒԱՐՏ.ՀԱՆԳՐՈՒԱՆ**
Ժամը 10:00-էն սկսեալ eurosport 2 կայանէն
**ՓԻՈՆԿՉԱՆԿԻ ՈԼԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐՈՒ 7-ՐԴ ՕՐ**
Ժամը 02:00 Քըրլինկի խառն աւարտ. հանգրուանի մրց.
Ժամը 02:30 Սահնակի զոյգի զտումի 5-րդ եւ 6-րդ մրց.
Ժամը 03:00 Սնոպորտի halfpipe կիներու զտումի մրցումներ աւարտական ժամը 04:00-ին
Ժամը 04:30 Ալպեան քոմպինէ վայրէջքի-downhill տղոց մրցում
Ժամը 08:00 Ալպեան քոմպինէ ոլորավայրէջքի-slalom տղոց մրցում
Ժամը 10:30 Դահուկարշաւ կիներու եւ տղոց դասական ոճի սփրինթ աւարտական ժամը 14:20
Ժամը 12:00 Չմշկարշաւի-speed skating կիներու 500 մ մրց. տղոց 1000 մ մրց.
Ժամը 12:30 Սահնակի-luge կիներու աւարտական մրցում
Ժամը 13:00 Քըրլինկի խառն աւարտ. հանգրուանի մրց.
Ժամը 13:00 Չմշկարշաւի-speed skating տղոց 1500 մ մրցում
Ժամը 14:10 Չմշկարշաւի-speed skating կիներու 500 մ մրց.

## Ֆութսալ

### Լիբանանի Կիներու Ախոյեանութիւն

## Զուք Մոսպէի Առաջատար




Լիբանանի Ֆութսալի կիներու ախոյեանութեան 3-րդ հանգրուանի մրցումներուն, առաջատար «Զուք Մոսպէի» յաղթեց «Շապիպաթ Ալ Նահտա Շուեյֆաթ»ին 9-0 հաշիւով: Նենսի Չայլեան նշանակեց 3 կոլ: Այս հանգրուանին արձանագրուեցան հետեւեալ արդիւնքները.
- 1875 Սփորթիֆ - Էյ Եու Էս Թի 2-0
- Սթարզ Աքատեմի - Պերիթիւս 2-0

## Պասքեթպոլ

### Լիբանանի Ախոյեանութիւն

## Հ.Մ.Ը.Մ. Պահեց Առաջատարի Դիրքը

Լիբանանի պասքեթպոլի ախոյեանութեան 17-րդ հանգրուանի մրցումներուն, «Հ.Մ.Ը.Մ.» իր դաշտին վրայ մրցեցաւ «Մութթահէտ»ի դէմ եւ տարաւ իր 15-րդ յաղթանակը: Այս հանգրուանին արձանագրուեցան հետեւեալ արդիւնքները.

- Հ.Մ.Ը.Մ. - Մութթահետ Թրիփ.94-72, ամենալաւ նշանակողներ.Սէմ Եանկ 34 կէտ 15 ռիպ 1 փոխ 1 սթիլ 4 թըրնօվըր - Ռիքարտօ Փաուըլ 22 կէտ 6 ռիպ 3 փոխ
- Հիքմէ - Թատամոն Զուք 90-80:
- Պիպլոս - Ռիատի Պէյրութ 80-88

ամենալաւ նշանակողներ. Նիքոլոզ Ցքիթիշվիլի 34 կէտ 5 ռիպ 2 փոխ 1 սթիլ 1 թըրնօվըր - Ամիր Սէուտ 19 կէտ 1 ռիպ 2 փոխ 2 սթիլ

Իսկ շաբթուան ընթացքին տեղի ունեցան ախոյեանութեան առաջին փուլի վերջին՝ 18-րդ հանգրուանի մրցումները: Այս հանգրուանի ամենահետաքրքրական մրցումն էր «Շանվիլ» - «Հիքմէ» մրցումը: 3-րդ դիրքը գրաւող «Շանվիլ»ը իր դաշտին վրայ յաղթեց 4-րդ դիրքը գրաւող «Հիքմէ»ին: Ստորեւ տեսնել այս հանգրուանին ցարդ արձանագրուած արդիւնքները.

- Մութթահետ Թրիփ.- Պէյրութ 80-88
- Շանվիլ - Հիքմէ 95-89, ամենալաւ մարզիկներ.Ֆատի Ալ Խաթիպ 26 կէտ 14 ռիպ 7 փոխ 1 սթիլ 2 թըրնօվըր - Նաթիմ Սուայտ 25 կէտ 4 ռիպ 4 փոխ 1 սթիլ 2 թըրնօվըր
- Թատամոն Զուք - Լուայզէ 96-85

Այս հանգրուանի ամենահետաքրքրական մրցումն էր նաեւ «Ռիատի Պէյրութ» - «Հ.Մ.Ը.Մ.» մրցումը: 2-րդ դիրքը գրաւող «Ռիատի»ն իր դաշտին վրայ յաղթեց առաջատար «Հ.Մ.Ը.Մ.»ին, որ պահեց իր առաջատարի դիրքը: Ստորեւ տեսնել այս հանգրուանին արձանագրուած արդիւնքները եւ դասաւորումը.

- Ռիատի Պէյրութ - Հ.Մ.Ը.Մ. 87-82, ամենալաւ մարզիկներ.Ռամոն Կալըուէյ 20 կէտ 2 ռիպ 6 փոխ 1 սթիլ 3 թըրնօվըր - Սէմ Եանկ 25 կէտ 6 ռիպ 3 փոխ 1 սթիլ 1 թըրնօվըր
- Անթոնիյէ Պաապտա - Պիպլոս 74-63

Դասաւորում.1-Հ.Մ.Ը.Մ. 15 յաղթ. - 3 պարտ., 2-Ռիատի 15 - 3, 4-Շանվիլ 14 - 4, 4-Հիքմէ 13 - 5:

Վերջին ութի փուլին առաջին չորս խումբերուն պիտի միանան «Պէյրութ»ը, «Մութթահետ Թրիփոլի»ն, «Անթոնիյէ Պաապտա»ն եւ »Լուայզէ»ն: Այս հանգրուանէն դուրս մնացին «Պիպլոս»ը եւ «Թատամոն Զուք»ը:

### Հայաստանի Ախոյեանութիւն

## Ուրարտու Առանց Պարտութեան



Հայաստանի պասքեթպոլի ախոյեանութեան 12-րդ հանգրուանի մրցումներուն, «Արցախ» իր դաշտին վրայ ընդունեց առաջատար «Ուրարտու»ն: Առաջատարը կանուխէն պարտադրեց իր խաղը եւ յաղթեց

106-69 հաշիւով: Մրցումին ամենալաւ մարզիկն էր «Ուարտու»ի Էտկար Պապայեանը նշանակելով 46 կէտ: սակայն «Ուրարտու»ի զօրաւոր մարզիկ Նիքիթա Զախարովը վնասուածքով հեռացաւ դաշտէն: Այս հանգրուանին արձանագրուեցան նաեւ հետեւեալ արդիւնքները.

- ՖԻՄԱ - Կրանտ Սփորթ 78-57, - Արթիկ - Շիրակ Կիւմրի 82-71

## Ճատրակ

### Ճիպրալթարի Մրցաշարք

### Արոնեան Տիտղոսակիր




Ճիպրալթարի ճատրակի միջազգային մրցաշարքը հասաւ իր աւարտին: Հայաստանի վարպետ Լեւոն Արոնեան եւ ֆրանսացի Մաքսիմ Վաշիէ Լակրաւ կէտերով հաւասարեցան եւ ըստ մրցաշարքի օրէնքին կատարեցին 4 թայ պրէյքի արագ ճատրակի մրցումներ, որոնց 4-րդին Արոնեան յաղթանակ տարաւ եւ յաղթեց 2,5 - 1,5 հաշիւով ու շահեցաւ տիտղոսը:

### Մոսկուայի Բաց Մրցաշարք

### Կապոյեան՝ 13-րդ



Մոսկուայի մէջ աւարտեցան ճատրակի բաց մրցաշարքի մրցումները: Առաջին կարգի մրցաշարքին, Հայաստանէն Գէորգ Յարութիւնեան շահեցաւ 6,5 կէտ եւ գրաւեց 11-րդ դիրքը: Սեմիոն Լոմասով դարձաւ ախոյեան:

Կիներու մրցաշարքին, Հայաստանի ներկայացուցիչ Սուսաննա Կապոյեան արձանագրեց գոհացուցիչ արդիւնք, սակայն վերջին մրցումին պարտուելով գրաւեց 13-րդ դիրքը: Անոր պիտի շնորհուի Միջազգային վարպետի-international master կոչում: Անասթազիա Պոտնարուքը դարձաւ կիներու մրցաշարքի ախոյեան:

Երիտասարդներու մրցաշարքին ախոյեան դարձաւ Իկոր Վոլքովը, շահելով 8 կէտ: Հայաստանի ներկայացուցիչ Վահագն Խաչատրեան եւ Խաչատուր Մեսրոպեան շահեցան 7-ական կէտ եւ գրաւեցին 4-19րդ դիրքերը:

## Թենիս

### Տէյվիս Բաժակ

### Սպանիա Յաղթեց Բրիտանիային

Այս շաբաթավերջին սկսան թենիսի տղոց խմբային Տէյվիս բաժակի վերջին 16-ի հանգրուանի մրցումները: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

- Աւստրալիա - Գերմանիա 1-3, - Ճաբոն - Իտալիա 1-3
- Ղազախստան - Զուիցերիա 4-1, - Ֆրանսա - Հոլանտա 2-1
- Պելճիքա - Հունգարիա 3-1, - Խրուաթիա - Քանատա 3-1
- Սպանիա - Բրիտանիա 3-1, - Սերպիա - ԱՄՆ 1-3

Այս շաբաթավերջին տեղի ունեցած թենիսի տղոց խմբային Տէյվիս բաժակի վերջին 16-ի հանգրուանի մրցումներուն, ախոյեան Ֆրանսան իր դաշտին վրայ դժուարութեամբ յաղթեց Հոլանտայի հաւաքականին 3-1 մրցումներու հաշիւով: Շաբաթ օր Ֆրանսա կը յաղթէր 2-1 հաշիւով: Մանարինօ զիջեցաւ Տէ Պաքըրին, Կասքէ հաւասարեցուց հաշիւը յաղթելով Ռոպին Հաասին: Զոյգերու մրցումին, ֆրանսացի Հերպէր Մահիւ զոյգը յաղթեց Հաաս Ռոժէ զոյգին, իսկ 4-րդ ճակատագրական մրցումին, Մանարինօ յաղթեց Ռոպին Հաասին 4-6, 7-6, 7-5, 6-7 եւ 7-5 հաշիւով:

### Տէյվիս Բաժակ

### Լիբանան Ապահովեց Կիսաւարտականի Տոմսը




Թենիսի տղոց խմբային Տէյվիս բաժակի Ասիա-Ովկիանիա գօտիի երկրորդ դասակարգի քառորդ աւարտական մրցումին, Լիբանանի հաւաքականը 3-2 մրցումներու հաշիւով կարեւոր յաղթանակ մը տարաւ Թայուանի զօրաւոր հաւաքականին դէմ եւ անցաւ կիսաւարտական հանգրուան: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքը.

- Լիբանան - Թայուան 3-2

Պենճամին Հասան տարաւ 1 յաղթանակ, Հատի Հապիպ տարաւ 1 յաղթանակ: Հատի Հապիպ-Ճիովաննի Սըմահա զոյգը յաղթեց թայուանցի զոյգին: Միշէլ Սաատէ եւ Ժատ Պալլութ պարտուեցան: Լիբանանի մարզիչն է Նասրի Միշէլ Աշքարը:

Կիսաւարտական հանգրուանին Լիբանան պիտի մրցի Հոնկ Քոնկի հաւաքականին դէմ, որ 4-0 հաշիւով յաղթեց Իրանին:

### Ս.Փթերսպուրկի Մրցաշարք

### Քվիթովա Շահեցաւ Տիտղոսը

Ռուսիոյ Ս.Փեթերսպուրկ քաղաքի թենիսի կիներու մրցաշարքի աւարտական մրցումին արձանագրուեցաւ հետեւեալ արդիւնքը.

- Փեթրա Քվիթովա-Չեխ. - Քրիսթինա Մլատենովիչ-Ֆր. 6-1, 6-2

Քվիթովա շահեցաւ այս տարուան իր առաջին տիտղոսը: Մլատենովիչ անցեալ տարուան ախոյեանն էր:

ԶԱՐԹՕՆՔ Օրաթերթ Պատասխանատու խմբագիր՝ Սեւակ Յակոբեան رئيس التحرير: سيفاك اكوبيان جريدة سياسية أرمنية تصدر عن شركة شيراك الصحفية (ش.م.م.) زارتونك
zartonkadl@gmail.com P.O.BOX 11-617 & 175-348 Beirut-Lebanon +961 1 444225 www.zartonkdaily.com